

մար, և սովորականէն աւելի թոշակ ունենայ :

« Ըստ իմ կարծեացս, նոր ոստիկանութիւնն երբեք ազգու չպիտի լինի՝ մինչև որ Եւրոպայի սպայ մը չը գրուի անոր գլուխն : Ես չեմ կարծեր որ քրիստոնեայք նոր ոստիկանութեան մէջ պիտի մտնեն եթէ Եւրոպայի գլուխ մը չանուանի :

« Այս Եւրոպայի գլուխ ալ իւր հրամանայ ներքեւ դո՛նէ մէկ կամ երկու Եւրոպայի պէտք է ունենայ : Միայն այս միջոցաւ է որ թէ՛ իսլամացի և թէ՛ քրիստոնեայի տալահոյութիւնը պիտի կրնայ պաշտպանուիլ :

« Յարգ անօք կը խնդրեմ՝ Ձեր վճարումը թերէն, որ Բ. Դրան մօտ պընդէք, որպէս զի կարնայ ոստիկանութեան համար դո՛նէ մէկ Եւրոպայի սպայ անուանի, այսինքն կարող անձ մը, որ ընդունի այդ պաշտօնն : Այս խնդրոյն մէջ փութով դործելու է, ըստ որում՝ յանձնարարին տեղեկութիւնն այս առարկայ թղթատարով Կ. Պոլիս կերթայ :

« Ըստ իմ կարծեացս, բացարձակապէս անհրաժեշտ է որ նոր ոստիկանութեան կազմաւորումէն առաջ, կարգադրութիւնը լինին անոր ըստ պայման և զինուորացի ամառականներուն կանոնադրապէս վճարումն ապահովելու համար : Այս ալ ուրիշ կերպիւ չկրնար լինիլ, այլ, ինչպէս որ առաջարկած է յանձնարարման, նահանգին հաստիքի մէկ մարտնահանգին վարչութեան ծախսուց յատկացնելով բացարձակապէս կը խնդրեմ՝ Ձեր վճարումը թերէն, որ այս կէտին վրայ պնդէք Բ. Դրան քով : »

Այսպէս դրած է ահա թրօթթըր հազարապետն ասիէ ճիշդ վեց ամիս առաջ : Ոստիկանութեան՝ այն է հաստիքային տալահոյութեան պահպանութեան վրայ այս գրուածները ինչպէս որ ասիէ առաջ գրուածներէն ալ ոչ ոք դժգոհ եղած էր, Դժբաղդաբար, կարնայ ոստիկանութեան գործընտրութեան վրայ ամիս կամ աւելի ժամանակ առաջ ինչ վիճակ որ ունէր, այժմ դարձեալ նոյն վիճակն մէջ է : Պ. Թրօթթըր խօսքին նայելով, Բ. Դրանը իրենք կազմել պիտի տային նոր ոստիկանութիւնը : Բայց այս չեղաւ : Թերեւս Պ. Թրօթթըր սխալ ըմբռնած էր անոնց հրահանգները : Կառավարութիւնը Կ. Պոլսէն յատուկ մարդեր զրկեց կարին : Նոքա ալ բան մը չըրին մինչև ցարդ : աւելորդ է ըսել թէ կարնայ ոստիկանութիւնը կազմելու կամ հրամանատարելու համար Եւրոպայի սպայի խօսք բնաւ չէ ըրած կառավարութիւնը : Տէյլի Նիւզ լրագրին Կ. Պոլսոյ թղթակցին խօսքին նայելով, Դ. Պոլսոյ Օսման փաշան յայտարարեց թէ թուրքիոյ ոստիկանութեան մէջ Եւրոպայի ըստ պայման պէտք չկայ, և թէ այս ոստիկանութեան մէջ գործածուելու համար Անգլիայէն երեք տարի պայմանագրութեամբ բերուած տոմսներ յանգլիացի սպայք, որոցմէ միայն երկուքը գործածուելու մինչև ցարդ, իրենց պայմանագրով լրացնելէ ետեւ ոչ ևս ամսական պէտք է ստանան : Այլ, անցեալ տարի Սաֆիէթ փաշան փոքր-Ասիոյ բարենորոգմանց վըրայ առ Սըր Զէնրի Լէյարտ ուղղած ծանուցարարին մէջ խոստացած էր թէ Եւրոպայի սպայք պիտի կրնան գործածուիլ նոր ոստիկանութեան կազմութեան մէջ :

Ասկէց զատ, ինչպէս կը դիտէ Տէյլի Նիւզի թղթակցին, Եւրոպայի սպայք անհրաժեշտ էին, որովհետեւ նոր ոստիկանութիւնը միմիայն իսլամներէ չպիտի բաղկանար, այլ և

Քրիստոնեայներէ, և միայն Եւրոպացի սպայից ներկայութիւնն էր որ վստահութիւնն պիտի կրնար ներշնչել քրիստոնեայի : Ինչ և ինչ, Թուրքիոյ մէջ, խօսքերն ու խորհրդածութիւնները, խօստումներն ու յանձնարարումները կրնան բան մը լինիլ : Իսկ գործերն ու իրողութիւններն ուրիշ բան : Հետեւաբար, միայն կրնաիլ և Անգլիանուարացի ոստիկանութեանց համար մէկ մէկ Անգլիացի սպայ գործածուելու, և ըստ որում՝ կրնաիլ վարչական ինքնօրինութիւնն ունենալով իւր եկամուտէն բոլոր վարչական ծախսերը նախապէս տնօրինելու իրաւունք ունի, այդ կողմէն մէջ ոստիկանութեան գործը կրցաւ յառաջանալ : Բայց կեդրոնական կառավարութիւնն այնքան նեղը ձգեց իւր վերահսկողութիւնը նահանգային դանձն, որ Անգլիացի Պրինթ Գընդապետին հոն կազմած նոր ոստիկանութիւնը լուծուիլ սկսած է, և արդէն ութուան ոստիկան թոշակի չգոյութեան պատճառաւ մեկնած են Անգլիանուարացիք ի մեծ ցուտեղաւ կան ժողովրդեան : Իսկ Հայաստանի կողմն այնչափ ալ չէ եղած և անկէ ետքը, Թէրեզմանը Հաղիթաթ միայն կրնայ ըսել թէ « Բարենորոգմանը կը յառաջանան » : Այս կը յառաջանան, բայց դէպի վերջնական անյաջողութիւն :

ՀՆՈՍԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 9 յունիս
Բարեկուսոյ գլխէն երէկ եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Թրանսիլանիա ինքնիշխան զաւաճառութիւնն գործած լինելուն պատճառաւ բանտարկեցաւ :

Պաշտօնային իշխանը մօտ ժամանակէն Բեդրասովի պիտի երթայ, և վերադարձէն յետոյ երեսփոխանական ժողովը սահմանադրութեան մէջ լինելիք փոփոխութեանց վրայ պիտի վիճարանի :

Կալիֆօրնիայէն հեռագիր մը կըսէ թէ որչափ որ Մուհամմէտ շահ յայտարարեց թէ մինչև որ Անգլիայից Աֆղանստանէն չքաշուին զէնքը վար չպիտի դնէ, բայց և այնպէս դադարի բանակցութիւնը կը կը շարունակեն անոր հետ քանի որ Եւրոպայ խանի որդին Մուսա խանն իւր ձեռք անցուցած է : Բնդհանրապէս համարուի կողմէն բանակցութիւնը արդիւնքի մը պիտի յանգի, և թէ Մուսա խանն այն ժամանակ Աֆղանստանի Էմիր պիտի ճանչուի Անգլիայէն :

Եւրոպայ խանին ընտանիքն որ Քեապիլ մնացած էր, Հնդկաստան զրկուեցաւ Եւրոպայ խանին քով :

Վիէննա 9 յունիս

Լրագիրը կը ծանուցանեն թէ ծանր խռովութիւնը ծագեցան Սերպիոյ մէջ տրոյ յաւերան պատճառաւ :

Վերանայական լրագիրը կը ծանուցանեն թէ բազմակու Ռուս քարոզիչը և գործակառարը հասեր են Ի Զարոն :

Բեդրասովի 9 յունիս

Կը շարունակէ այն գրոյցը թէ Թոթլէպէն զօրավարը Բեդրասովի գլխուրական կառավարիչ պիտի անուանի :

Լոնտոն 10 յունիս

Քար-Թուրքիայէն երէկ եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Կապուստաբազ կան ողին կը շարունակէ Թրանսիլանիայի մէջ :

Հնդկաստանի կառավարութիւնն Հէրաթի մէջ լրտեսներ ունի, որոցմէ յաճախ տեղեկութիւններ կ'ստանայ : Այն տեղեկութիւններէն կը հասկցուի թէ Եւրոպայ խանին և Ռուսական Թիւրքիստանի միջև յարաբերութիւնը կան, բայց անոնց բնութիւնն ու նպատակը չը գիտցուի :

Այս առաւօտեան Տէյլի Նիւզ կըսէ թէ Ռուսիա մեծ ձեռքով կը բանեցնէ Պարսկաստանի վրայ, որպէս զի կորուսած արդեցութիւնը վերստին ձեռք բերէ :

Բեդրասովի 10 յունիս
Սթոպէլէֆ զօրավարը (անդրանիկը) մնաւ երէկ :

Կը հաւատան թէ Ռուսիոյ գանդաւանացի վրայ Գերմանական կառավարութիւնն ընկերակալութիւնը զսպելու համար օրինաց նոր ծրագիր մը պիտի ներկայէ երեսփոխանական ժողովին, ըստ որում ներկայ օրէնքը չէ կրցած արդելու Բեդրասովի Անգլիայից Գերմանիոյ մէջ նիւթուած մեքենայութեանց հետեւէ :

Այս առաւօտ հասած հեռագիրք

Լոնտոն 10 յունիս
Քեապիլէն երկու վերջին լրոյց նայելով, Մուհամմէտ շահ ամբողջովը մը բռնած է Ի Կազին և Եւրոպայ խանի որդեղն անուամբ տուրք կը հաւաքէ :

Վիէննա 11 յունիս

Ի մօտոյ Սերպիոյ կողմէն պաշտօնատար մը Վիէննա պիտի դայ՝ Աւստրիական և Սերպիական երկաթուղեաց միացման խնդիրը վերջնականապէս լուծելու համար :

Փանտա 11 յունիս
Պաշտօնային տպագրող գործերն իրենց գլուխ ընտրեցին Թամարայ զօրավարն (արդի զօրավարին ապիկարութեանը պատճառաւ) :

Լոնտոն 10 յունիս

Օսմ. Բան.	9 7/8
Փոլ.	1863 12 5/8
»	1869 12 5/8
»	1871 62 3/4
»	1872 18
»	1873 10 5/8
» Եւրոպ.	83 7/8
Անգլ. Բան.	97 13/16

Փարիզ 10 յունիս

Օսմ. Բան.	9,90
Գաղղ. »	50/0 116,67 1/2
» » » Նոր	85,40
» Բան.	50/0

Փարիզ 11 յունիս
(Փոքր Պոսա)
Օսմ. Բան. 10, 7 1 2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր ընթերցողը կը յիշեն թէ Բար-բերդի կառավարիչ Ապտ-ին — Նաֆի Էֆէնսին բացարձակապէս հակառակած էր բարենորոգմանց գործին : Քամիսէր Մանսու Էֆէնսին հետ թշնամացած էր, անոր և Ապտ-ինն փաշայի ձեռքակալած Բար-բերդի ազատ թողած էր եւս կը յիշուի նաեւ թէ երկու կողմն ալ, Մանսու Էֆէնսին և կառավարիչը, Կ. Պոլիս հեռագիր քաշելով իրողութիւնը Բ. Դրան ծանուցած էին : Մայրաքաղաքի Անգլիական լրագրոյն Բար-բերդի թղթակցը դեկտ. 20 թուով նամակին մէջ կը ծանուցանէ թէ Ապտ-ինն — Նաֆի Էֆէնսին Մուսուլի կուսակալ (վալի) անուանուելով տարաւ կողմէն մնացած թէ կեդրոնական կառավարութիւնը վարձատրել ուզած է Բար-բերդի Միւթսարըֆը, զայն աւելի բարձր պաշտօնի մը կոչելով : Միւս կողմէն, նոյն թղթակցը կը ծանուցանէ թէ, ինչպէս որ Ապտ-ինն փաշան կուսակալութեան պատուարէյէն հեռացած էր, վերջերս կեդրոնական իշխանութեան կողմէն Մանսու Էֆէնսինի ալ հեռագիր գընաւցեր է որ փութով և անպատճառ Կ. Պոլիս վերադառնայ : Այսպէս, Տիւրքիայի և Բար-բերդի կողմը բարենորոգմանը երեսի վրայ մնացած են, և թղթակցը կըսէ թէ, ինչպէս կարնայ կողմը, նոյնպէս Մարտինի, Տիւրքիայի և Բար-բերդի կողմին իրաց զինակը Քամիսէրաց զալէն առջի վիճակէն աւելի դէշ են այժմ : Ռուսի, թղթակցին լրտեսներ

ունի երբ «մեղամոյճիկ կատակեր» գութիւն բարենորոգմանց» անունը կուտայ բոլոր այս գործերուն :

Նախորդ խոսիլ խմայել փաշային կողմէն յատուկ պաշտօնով մը թափուլ փաշան մայրաքաղաքս եկաւ : Կըսուի թէ նախորդ խոսիլին համար Կ. Պոլիս գալու արտօնութիւն պիտի լինէր Բ. Դրանէն : Իսկ ուրիշ տեղեկութեանց նայելով, իսկ մնայել փաշան նարօլէն կ'արտոն երթաւ և հոն բնակութիւն հաստատել կողմէն եղեր, յորմէ կրնայ կարծուիլ թէ իւր Կ. Պոլիս գալու խնդիրն ըստ իրողութեան չգնաներ Օսմ. կառավարութեան :

Թնդանութեան վերաբերուց Միւթսար Ալի Մայիկ փաշային նոր պաշտօն մը յանձնուեցաւ «թօքմու» լար Միւթսարին անուամբ :

Շարաֆ դիշեր ծովային գործոց նախարարին տունը գողեր մտան, բայց առանց բան մը ձեռք անցունելու հաւաքուեցան :

Հայաստանի և Քիւրդաստանի անդադիական հիւպատոս Պ. Թրօթթըր հազարապետը դեկտեմբերի երրորդ շաբթուն մէջ (Ն. Տ.) Բար-բերդի քաւած և ամեն կարգի տեղական ժողովրդոց կողմէն մեծ պատուով ընդունուած էր : Հիւպատոսն հոն շաբաթ մը կենալէ յետոյ Տիւրքիայի պիտի երթայ, ուր թերեւ կը գընաւուի այժմ, և ձմեռն հոն պիտի անցունէ :

Դեկտ. 31ին (Ն. Տ.) Բեդրասովի Կի Զմեռուան պալատ անուն կայսերական պալատին մէջ կոչուեց մը տրուեցաւ Ռուսական զօրաց Պաշտօններէ անցնելուն և Թաքէսէնի ծակաւամարտին տարեդարձին առթիւ : Ռուսիոյ կայսրը ներկայ կը գտնուէր՝ գահաժառանգ կայսրորդուին և կայսերական դերձատանի ուրիշ անդամաց հետ :

Կուսակալին փաշան արտօնութիւն ստացաւ Թարաւ-պաշին հասարակաց պարտիզին քով և Պ. Թուրքիայի տան դիմաց խաղական Թատրոն մը կառուցանելու :

Ռուսական կրեմլիանայ ժողովը, կառավարութեան առաջարկութեան վրայ՝ տան տարուան համար ազատ նաւահանգիստ հրատարակեց կալաց, իսլայիլ, Թուրքա, Սուլիմա և Գէօրգիսէն քաղաքները :

Փիլիպէի Յունական եկեղեցին, որ տեղւոյն Պաշտօնաց կողմէ գրաւուեալ էր Ենիգեան դիշերը, դարձեալ Յունաց յանձնուեցաւ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍԶԱՄԱՐՈՒՄՈՒՄՈՒՄՈՒՄ

Երէկ իրիկուն ցուցուեցաւ	—
Այս առաւօտ ցուցուեցաւ	40,34
45 օրին	40,34
Բուժիչի երկարութիւն	Ֆր. 36 30
Թիւրքալար	Ժր. 383
Թրակալ	Պոլ. 380

ԲՆԹԱՅԻՆ ԱՐԴԱՆԻՔՈՅ

29 Դեկտեմբեր

Սոսիթի Դէկլարալ Բաժ. Անգլ. Ժր.	4,12
» Գերմանական Բաժ.	3,21
Կ. Պոլսոյ Պաշտօնին	6 10
Քրէտի Դէկլարալ	5,
Փոլ. 1863	Ֆր. 60
» 1865	» 71
» 1869	» 69
» 1872	» 21
» 1873	» 64

